* ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՎԱՆ, ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ «ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՌ ՃԱԳՆ, ՈՐ ԿՈՉԻ ՍԱՐԻԿ» ԽՈՀԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊՈԵՄՈՒՄ

Անանա Սարեփանյան

Մեր հոդվածը նվիրված է Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Բան իմաստութեան առ ճագն, որ կոչի սարիկ» ստեղծագործությանը: 2014 թ. Գ. Տեր-Վարդանյանը ներկայացրել է Հովհաննես Սարկավագի պոեմի բնագրային նոր ու էական փոփոխություններով տարբերակը, որից և օգտվել ենք աշխատանքը շարադրելիս[1]: Գրականագիտության մեջ հայտնի չէ պոեմի գրության թվականը, բայց անշուշտ, հստակ են Հովհաննես Սարկավագի փիլիսոփայական հայացքներն, ու շատ գաղափարական շեշտադրումներ արված են հենց փիլիսոփայական մի շարք աշխատությունների մեկնություններից:

Դավիթ Անհաղթի երկերի ուսումնասիրությունը պարզ ու հասանելի դարձնելու համար Հովհաննես Սարկավագը դրանք շարադրում է պարզ լեզվով: Եվ էական ու զգալի է նաև Անհաղթի փիլիսոփայական հայացքների որոշ դրույթների նորովի մեկնությունը, որ տեսնում ենք նաև Հովհաննես Սարկավագի ստեղծագործություններում. «…արուեստն նախ երեւակայի ի միտսն առնողին, այսինքն՝ կերպարանի օրինակն ի միտսն զոր կամի առնել եւ ապա ճանապարհորդէ գործով առնել զոր նկարեաց ի միտքն. բայց բնութեամբն ոչ սոյնպէս, այլ ունակութեամբ առանց կերպարանելոյ գան յառաջ ամենայն էգս ստեղծմամբ, զի ոչ ոք նախ կերպարանեցաւ եւ ապա եղեւ արու եւ էգ[2]»: Սա արդեն ապացուցված է, և կարիք չկա նորից անդրադարձ կատարելու վերոնշյալ խնդրին:

---

* Հոդվածը ներկայացվել է 23.02.2020 թ., գրախոսվել է 18.03.2020թ., ընդունվել է տպագրության 21.04.2020 թ.:

1 Տե՛ս **Գ. Տէր-Վարդանեան**, Հովհաննէս Սարկաւագի «Բան իմաստութեան» չափածոյի նոր բնագիր, էջմիածին, հ. Է, էջմիածին, 2014:

2 **Հ. Սարկավագ Իմաստասեր**, Լուծմունք «Սահմանաց գրոց», Երևան, 2004,էջ 40:

Մեր նպատակն է ցույց տալ պոեմում առկա փիլիսոփայական հարցադրումների՝ Հովհաննես Սարկավագի մեկնաբանությունները, որոնք յուրատիպ վերլուծական շեշտադրում ունեն և շրջանակված են գեղարվեստական ձևերով, այսինքն՝ խոհա-փիլիսոփայական պոեմ է գեղարվեստական լուծումներով: Պոեմում կարդում ենք.

Առ հանդերձեալն ժամանակ անջնջելի, քաջայարմար
Յորդորականս և վայելուչս, յորմէ օգտին իմաստնացեալք:
Կամ թէ ևս առաւելագոյն, որպէս թուի ինձ՝ գիտողիս,
Զի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ մերձ առ բնութիւն[1]:

Փ. Անթապյանը գրում է. «Նա (Հովհաննես Սարկավագը-Ա. Ս.) հասել է «փորձը» իբրև իմաստասիրական բարձր կատեգորիա ճանաչելու և վերահաստատելու գաղափարին[2]»:

Ուշագրավ է նաև Հրանտ Թամրազյանի դիտարկումը, ըստ որի՝ «Նորին (Հովհաննու) առ Սարգիս ողբք» բանաստեղծության մեջ Հովհաննես Սարկավագի՝ Աստծուն դիմելը անզգացմունք է ու արհեստական: Նա, կարծես, հանգիստ է թողել Աստծուն և քննում է բնական երևույթները՝ փորձելով գտնել բանական-ռացիոնալ պատասխաններ, հանգել գիտական ճշմարտության[3]: Բանաստեղծության մեջ արդեն զգալի է այս փորձը, որը գնալով խորանում է նրա հետագա ուսումնասիրություններում, երկերում, հատկապես պոեմում: Պոեմը ավելի է շեշտադրում ասելիքը, գաղափարը բանավեճի միջոցով: Իսկ փոխադարձ մեղադրանքները վեճը դարձնում են բնականի մասին խորհող, փորձը կարևորող, գիտականի ու գեղարվեստականի մի համադրություն:

Առանձնացրել ենք պոեմում առկա հետևյալ հասկացությունները՝ կյանք-մահ, ազատություն, հայտնություն: Այս թեմաները պոեմի հիմնական ասելիքն են բովանդակում, և բանավեճը կառուցվում է՝ այս խնդիրները քննելով:

1. Կյանք-մահ.

Պոեմի հիմնական շեշտադրումներից է մարդու մեղսագործ, աստվածային շնորհից զրկված լինելը: Թռչնի համար երկիրը ժամանակավոր ապաստան է, մարդիկ ու կենդանի էակները այստեղ պանդուխտներ են,

---

[1] **Գ. Տէր-Վարդանեան**, նշվ. աշխ., էջ 53, 57: Սույն աշխատանքից հաջորդ մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում:

[2] **Փ. Անթապյան**, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Երևան, 2001, էջ 102:

[3] Տե՛ս **Հրանտ Թամրազյան**, Երկեր, հ. Գ, Երևան, 2006, էջ 502:

և որ կարևորն է, այս ժամանակավոր ապաստանը միջոց է մարդու ուսման, մտքի զարգացման համար: Թվում է՝ թռչնի բողոքը բանաստեղծի համար դառնում է սովորական մի աղաղակ, անհարմարություններից, դժվարություններից հոգնած տառապյալի առօրեական մի բողոք: Սակայն թռչունն էլ բանավեճի ընթացքում ասելիքը ապացուցող փաստարկներ է բերում, խոսքը հաստատում օրինակներով և ստիպում բանաստեղծին հայտնվել հոգեբանական ծանր վիճակում՝ հիշել մարդուն՝ իբրև նախնական մեղքի կրողի ու աստվածային շնորհից, բնականից զրկվածի: Ուշագրավ է բանաստեղծի մի դիտարկում.

Զորմէ սիրեմդ՝ տրտնջեմ, զի աստ կրեցի, զոր ասացիդ,
Նաեւ այսու եւս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ… (55-56):

Պոեմում խրատական ոչ մի խոսք չկա, ամեն ինչ ասվում է այնպես, որ ընթերցողը կարդալիս սկսի մտածել երկում արտահայտված գաղափարների շուրջ: «Նորին (Հովհաննու) առ Սարգիս ողբք» բանաստեղծության մեջ Հովհաննես Սարկավագի ասելիքը «խրատում է», փորձում է ընթերցողին հուշել, բացատրել մարդու սխալները.

Նախնոյն հեստողի, եղէ ծնունդ հօր հանգունակ, օրինազանց:
Նոյն աճեցեալ յիս չարութիւն, յոգնապատիկ ի սպանողէն:
Էի երբեմն եւ ես անմեղութեամբ բարգաւաճեալ, որպէս և նայն
Լեր դու ունկնդիր անոխակալ, մոռանալով զիմ զառաջինն խակութիւն[1]:

Իսկ պոեմում նման մոտեցում չկա: Ընթերցողը բանավիճում է երկու կողմի հետ, և թռչունն ու բանաստեղծը ունեն իրենց նախապես մտածված, տրամաբանված փաստարկներն ու պատասխանները: Ընթերցողը միանշանակ չի կարող ասել, որ բանաստեղծը պարտվեց կամ սխալ էր, բայց և չի կարող չհամաձայնվել թռչնի հետ, նա ունի իր ճշմարիտ եզրահանգումները: Ընթերցողին մնում է միայն մտածել բանավեճի թեմաների մասին:

Մի՛ պատճառեր զանբանութիւն դու, յօդաձայնդ վերծանող,
Անյօդ ձայնիւ վարդապետեա՛ և ստացիր զիս աշակերտ… (էջ 52):

Հովհաննես Սարկավագը ևս կարևորում է ամեն ինչ բնորոշելու, սահմանելու, ապացուցելու և փորձելու մարդկային ձգտումը: Եվ դրա համար պոեմում շեշտում է բանաստեղծի՝ սարյակին աշակերտելու ցանկությունը, որովհետև սարյակը բնության իմաստությունն ու նախնական անմեղությունը, հավաքական ձայնի՝ էության, կրողն է:

---

[1] **Հովհաննես Սարկավագ Իմաստասեր**, Տաղեր և հոգևոր երգեր, Երևան, 2017, էջ 34:

Ուշագրավ է, որ 12-13-րդ դարերում ֆրանսիական տաղերգության մեջ կարդում ենք նույն բովանդակությամբ անհայտ տաղերգուի մի բանաստեղծություն: Կարևոր է հատկապես ժամանակը: Նույն շրջանում ստեղծագործող գրողները կարևորել են նույն թեման:

Ժոնգլերներից ավելի լավ էին երգում
Այս **երկրային կացարանի** թռչունները:
Նստեցի ես լսելու հրաշք-դայլայլը
Այնտեղ, որտեղ յասամանն էր ծաղկել:
Տե՛ր իմ, **Պատճեն- հպարտություն**[1]…
(ընդգծումները մերն են-Ա. Ս.):

Այսինքն՝ դարձյալ կա այն ընկալումը, որ թռչունը բնության պատճենն է: Համաձայն քրիստոնեական վարդապետության՝ Աստված ամբողջ գոյի ծագման սկզբնապատճառն է: Իսկ բնությունը Աստծո արարչագործության հաստատումն է: Իմացաբանական հիմնական հարցը բնության նկատմամբ մարդու մտածողության հարաբերությունն է, և Սարկավագը ճշմարտության չափանիշ է համարում արտաքին առարկաների օբյեկտիվ ռեալությունը[2]:

Ընդ ընկալողացդ զՏեառն կամըս չընկալողքս զգիտութիւն,
Ընդ ազատ կամաց ունողսդ հետեւեալքս ըստ բնութեան… (59)
(Դուք՝ Տիրոջ կամքը ճանաչող, մենք՝ գիտություն չընկալողներ,
Դուք՝ ազատ կամք ունեցողներ, մենք՝ բնության հետևողներ…):

Թռչունը մեղադրում է մարդուն, քանի որ նա դարձավ ժամանակավոր ապաստան որոնող: Ի վերջո, վեճը հավերժական կյանքից զրկվածության, մահվան դատապարտվածության համար է, և կյանքը ժամանակավոր ապաստան է համարվում: Հստակ է ներքին շեշտվածությունը և պահանջը. թռչունը բողոքում է, որովհետև երկրային կյանքը մարդու պատճառով է ժամանակավորվել: Սարյակի ճնշող խոսքերից տանջվում է նաև բանաստեղծը: Սարկավագը հոգեբանական ապրումները ներկայացրել է գեղարվեստական մեծ ընդգծվածությամբ.

Տրտմեցայ եւ զուարճացայ՝ ի մէջ երկուցն պաշարեալ.
Վազեն արտաքս իբրև ընդ ծերպս եւ բնաւ արգել ոչ ունելով…
Ասացից եւ իմացայց, եւ մի՛ եղէց ընդվայրատանջ,

---

[1] **Французская средневековая лирика**, Москва, 1990, с. 105-106.

[2] Տե՛ս **Հովհաննես Սարկավագ Իմաստասեր**, Տաղեր և հոգևոր երգեր, էջ 20:

Աշխատեցայց անշահարար, *ունայնապուր իմաստութեամբ*

Բազմադիմի վնասուն ձգմամբ, որ հանդիպի ի մէջ մարդկան (ընդգծումը մերն է – Ա.Ս.) (55):

Զգալի է, որ երկու կողմն էլ ցավով են անում եզրակացություններ. մարդկության մեղքի պատճառով է տանջվում բնության մեջ ապրող թռչնիկը.

Դու նեղես զիս անձանձիր՝ որպէս գտեալ յինէն վնաս,
Դատախազես աղաղակաւ՝ որպէս օրէն է զրկելոց,
Ատենաբար առ դատաւորն սաստիկ զինէն ամբաստանես.
Կամ թէ կարծես զիս թշնամի՝ օտարապէս քեզ մարտուցեալ…
Նաեւ այսու եւս աշխատիմ, զի մուրհակաւ ամբաստանեմ

(ընդգծումը մերն է – Ա.Ս.) (55):

Հովհաննես Սարկավագն անդրադառնում է կարևոր մի փաստի և ներկայացնում նրա կրոնական մեկնաբանությունը. խոսքը կաշեզգեստի խորհրդի մասին է: Ադամը կաշեզգեստը ստանում է մեղքից հետո, այսինքն՝ զգեստը մարդու մեղսակրության ապացույցն է, և ինչպես Հովհաննես Սարկավագն է կարծում՝ «ապացույց մեռելութեանն և գուշակիչ ունակութեան»[1]: Մեղքն ու մահը նույն հարթությամբ են քննված: Մեղքը հավասար է մահվան, և կյանքը ընկալվում է իբրև երկրային մահ: Մեղքի և մահվան նույնացումը բնորոշ էր միջնադարյան քրիստոնեական մտածողությանը:

Ըստ Գ. Գրիգորյանի՝ Հովհաննես Սարկավագը ոգու և բնության, մտածողության և կեցության փոխհարաբերության խնդիրը լուծում է իդեալիստորեն՝ աշխատելով, սակայն, տրամաբանորեն հիմնավորել ու փիլիսոփայորեն մտապատկերել այն՝ կիրառելով արիստոտելյան հնարավորության և իրականության ոլորտը և ընդունելի դարձնել բանականության համար: Նա պահանջ է դնում՝ թափանցել բնության գաղտնիքների մեջ, բացահայտել նրանց էությունը, իսկ այս պահանջը ժամանակի համար առաջավոր էր[2]:

2. Հայտնության խորհրդանշական իմաստները.

Արդ կացի ի բնականին, որոյ պարգևն է յայտնութիւն,

---

[1] Նույն տեղում, էջ 26:

[2] Տե՛ս **Գ. Գրիգորյան**, Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, Երևան, 1958, էջ 189:

Որ ի լրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հոտին…(54)

Թռչունը Աստծուց (Բնությունից) որպես պարգև՝ հայտնություն, ստացել է երգելու շնորհը: Մարդու մեղսակրությանն ի հակադրություն, բնությունը և այնտեղ ապրող կենդանիներն ու թռչունները մնացել են նույն ստեղծասկիզբ անմեղությամբ, հետևաբար հայտնությունը՝ շնորհը, պատահական չէ: Հովհաննես Սարկավագը թռչնի միջոցով հայտնության այս ընկալումը ներկայացրեց միջնադարի մարդուն: Սա արտաքին, թվացյալ շղարշն է, բուն իմաստը, կարծում ենք, շատ ավելի խորն է: Աստվածաբանության մեջ հայտնությունը ունի տարբեր ընկալումներ, որոնք չեն կարող խորթ լինել նաև Հովհաննես Սարկավագի պոեմում ներկայացված հայտնության գաղափարին: Ըստ այդ ընկալումների՝ հայտնությունը Քրիստոսն է:

Հովհաննու Ավետարանում Քրիստոս ներկայացված է որպես մարդացած Աստված, Աստված, որ մարմին վերցնելով, հայտնվեց մարդկանց մեջ. «Եւ բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ: Եւ Տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զմիածնի առ ի հաւրէ, լի շնորհաւք եւ ճշմարտութեամբ» (Հովհ. Ա 15-16): Քրիստոսի երկրային կյանքը ընկալվում է որպես աստվածային հայտնություն «փոքր հոտին» (Ղուկաս ԺԲ 32). «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որ Էնն Աստուած, աստ բազմեցաւ»[1]: Քրիստոսի միջոցով մարդկությանը տրված աստվածային հայտնության գաղափարը առկա է եկեղեցական մատենագրության մեջ:

Իմաստասերի պոեմում որևէ բառ չկա Քրիստոսի մասին, բայց սարյակին արված բնութագրումներով կարելի էր նաև բնութագրել մարդուն, հետևաբար այս բառերով բնութագրելով սարյակին, նաև կարող էր նկատի ունենալ «նոր մարդուն»՝ Քրիստոսին: Խնդիրը պարզվում է նաև սարյակին տրվող մակդիրները քննելուց հետո՝ *արթուն, զուարթուն, հըսկող, բարբառող, անդառասէր միայնակեաց, ձեռնընդել համբուրասէր, կանչող, կարկաչող, ճճուող ձայնիւ պաշտօնասէր*:

Այս բառերը, անշուշտ, բնութագրում են մարդուն և ուշագրավ է, որ միջնադարում հենց այս բառերի «կատարումն» էր պահանջվում մարդուց՝ արթուն կենալ (արթուն, զվարթուն), պատրաստ լինել Ահեղ դատաստանի օրը (հսկող): Հսկող, պաշտոնասեր բառերը հստակ բացա-

[1] Պատարագամատոյց ըստ արարողութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Ս. Էջմիածին, 2010, էջ 25:

հայտում են, որ պոեմում խոսքը հենց թռչնի մասին չէ: Պաշտոնասերը գրաբարում նշանակում է աստվածասեր, բարեպաշտ, ջերմեռանդ[1], իսկ արթուն և զվարթուն, հսկող, բարբառող մակդիրները ավետարանական հիմնական ընդգծյալ բառերն են, որոնցով մարդկությունը պիտի պահի զգաստությունը, արթուն ու պատրաստ լինի Ահեղ դատաստանի օրը: Ըստ Ասատուր Մնացականյանի՝ թռչունը վերածվում է մի գերբնական էակի և, հավանաբար, սարյակը հենց բանաստեղծն է[2]:

Հովհաննես Սարկավագի՝ սարյակին տրված այս բնութագրումների, մակդիրների մասին գրականագետ Վ. Սաֆարյանը գրում է. «Էպիտետները ապահովում են միջնադարի աշխարհայեցողությունից մի կարևոր առաջընթաց. սարյակն այստեղ դառնում է ոչ թե միջնադարյան սիմվոլիկայի սկզբունքով կերտված բնության ինչ-որ երևույթի միստիկական ոգու առկայություն իր վերացական անընկալությամբ, այլ թռչունի ճիշտ ու բնական այս պատկերի մեջ միաժամանակ ամփոփվում է ներանձնականացված մարդու (միայնակեաց, արթուն, համբուրասէր, պաշտօնասէր) ձգտումը: Նա բնության և մարդու, բնականի և մարդկայինի ներդաշնակումն է, և դա է, որ մոտեցնում է եզրերը (մարդ-բնություն) ու դառնում Վերածննդի գեղագիտության հիմքը[3]»: Իհարկե, այս դեպքում էլ Սարկավագը մարդու հատկանիշները բնության միջոցով կերպավորել է խորհրդանշական ձևով, բայց ուշագրավ է այն, որ մարդու խնդիրն է քննում բնության միջոցով, բնության օրինակի միջոցով: Ղ. Ալիշանը գրում է. «Ինչ որ ԺԵ դարուն մեջ սկսան եվրոպացիք՝ ինքը (Հովհաննես Սարկավագը-Ա. Ս.) մետասաներորդին սկսեր է[4]»:

Սարկավագը կարող էր սարյակին տրված հայտնությունը համարել Քրիստոսի խորհուրդ և մարդուն ուղղված արթնության կոչ: Փիլիսոփայական պոեմում ռացիոնալ, բանական, փորձով ստուգված փաստարկների մեխանիզմն է գործում, դրա համար էլ անգամ հայտնության և նրա կրողի՝ Քրիստոսի մասին խորհրդանշական ձևով ներկայացնելը գրողը պետք է լուծեր իր իմաստասիրական-մակացական համոզմունքների տեսանկյունից:

---

[1] Գրաբարի բառարան, կազմ.՝ **Ռ. Ղազարեան**, Երևան, 2000, հտ. 2, էջ 1073:

[2] **Աս. Մնացականյան**, Բանբեր Մատենադարանի, հ. ԺԴ, Երևան, 1984, էջ 19:

[3] **Վ. Սաֆարյան**, Կիլիկյան Հայաստանի գրականությունը, Երևան, 1990, էջ 84:

[4] **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. 2, Վենետիկ, 1921, էջ 263:

Աստվածաբան, փիլիսոփա Իվ Կոնգարը գրում է. «Բանի (իմա՛ Քրիստոսի-Ա. Ս.) էջքը մեր մարմնով, Աստծո կողմից ծառայի կարգավիճակի ընդունումը, առաքյալների ոտքերը լվանալը, այն խոնարհ սերը, որն առաջնորդեց դեպի մահ Խաչի վրա, այս ամենը հայտնության եւ աստվածային հայտնության ուժ ունեն. «Փիլիպպո՛ս, եւ ինձ չճանաչեցի՞ր. ով ինձ տեսավ, տեսավ Հորը (Հովհ. ԺԴ. 9)[1]»: 20-րդ դարի աստվածաբան Փանենբերգը գտնում է, որ Քրիստոսի հարության մեջ անհետանում է հայտնության միջոցի տարբերությունն Աստծուց և Քրիստոսի աստվածությունը Աստծո «հայտնութենական ներկայությունն է» Նրա մեջ[2]:

Փիլոնի երկրորդ գրքում («Յաղագս բան ունել») կարդում ենք. «…այն, որ ընդ կերպարանին, իմանալի և անտեսանելի է, որ դաս ընկալաւ զայնս որ յանմարմինս տեսակքն, բայց ես ասացից նըշանակ կարծեցեալ գոլ զդրախտն իմաստութեան, զի ստեղծեալն խառնըուած է, և բաղկացեալ յոգւոյ և ի մարմնոյ և պէտք էն նմա ուսման և վարդապետութեան ցանկացել ընդ իմաստութեան օրինաց, զի եղիցի բարեբախտիկ, իսկ այն, որ ընդ կերպարանին է անկարօտ է, ինքն ուստ, և ինքն ուսումն, և ինքն վարդապէտ անձին եղել բնութեամբն»[3]: Ուշագրավ է, որ Սարկավագը պոեմում հատկապես ընդգծում է պարզ երգը (անյօդ ձայն):

Հովհաննես Սարկավագին ծանոթ են եղել Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները, և մեկնություն է գրել «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության վերաբերյալ[4]: Անհոդ՝ անկապակից իմաստից բացի, Դավիթ Անհաղթը կարևորում է հոդի մեկ այլ նշանակություն ևս. «…յորժամ ասեմք առանց յօդի, թէ այր եկն, որպէս յաղագս անծանօթ իրի ասեմք. իսկ յորժամ ասեմք, թէ այրն եկն, զյառաջածանօթ իրս նշանակէ: Բայց և **աստանօր** յօդդ ոչ ինչ յայսպիսեաց նշանակէ, բայց եդաւ վասն յայտնելոյ **զընդհանրութիւնս էակացն** (ընդգծումները մերն են – Ա. Ս.). քանզի ունիմք ուսանել և գիտել յառաջիկայսդ, եթէ առանց յօդի առաջարկութիւնք համազօրք են մասնականացն. իսկ հանդերձ յօդիւն՝

---

[1] **Y. Congar**, The Revelation of God, New York, 1968, p. 70-71. : Տե՛ս Էջմիածին, 2017, Զ, էջ 26:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 31:

[3] Մատենադարան, ձեռագիր № 2595, ժբ:

[4] Տե՛ս **Հ. Սարկավագ Իմաստասեր**, Լուծմունք «Սահմանաց գրոց», Երևան, 2004:

համազորք գոն հանրականաց առաջարկութեանց»[1]: Խնդիրը հավաքական ընկալումն է: Սարյակը ամբողջ բնության խորհրդանիշն է, Քրիստոսը՝ նոր մարդու: Շատ դեպքերում Սարկավագը մեկնություններում հակառակվում է նաև Անհաղթին, բայց ոչ այս հարցում: «Անյօդ ձայնիւ»-ը ոչ թե անկապակից կամ պարզ ձայնն է, այլ ամբողջ բնության ձայնը, իբրև սարյակին տրված շնորհ՝ տրված համայն բնությանը: Իսկ Փիլոն Եբրայեցու գրքում կարդում ենք. «Արդ պարզից խոստովանեցելոց մարմնոյ և իմանալոյ էութիւն ինքն է արարիչ միայն անյօդական և պարզ գոլով ընդ բնութեան[2]»:

Հայտնությունն իբրև երրորդություն- Հայտնության ընկալման մեկ այլ տարբերակ է ներկայացնում Ասատուր Մնացականյանը. հայտնությունը վերաբերում է Քրիստոսի մարդեղությանը.

1. Հայտնությունը տաղանդը չէ, կամ այն թռչնի հավատարմության համար Աստծուց բաշխված հնազանդության պարգև չէ: Հայտնությունը այլ խորհուրդ ունի:
2. Ուսումնասիրողը գտնում է, որ թռչնի կերպարում քրիստոնեական եռաստվածության Սուրբ Հոգին է: Նա շեշտում է հատկապես այն գաղափարը, որ պետք չէ կտրականապես մերժել պոեմում առկա կրոնական-խորհրդաբանական շերտը և չտեսնել թռչնի այլաբանական խորհուրդը, այն է. «Հովհաննես Սարկավագը սարյակի միջոցով չի՞ տվել Սուրբ Հոգու գաղափարն արտահայտող նոր ոգու պատկեր»[3]: Եվ հանգում է այն եզրակացության, որ Սարկավագը ստեղծել է բնության ուժերի մարմնավորման և հովանավորի մի նոր կերպար՝ հեթանոսական խառնվածքով, և որ քրիստոնեական ձևի ներքո վերակենդանացրել է հեթանոսական ոգին[4]: Փիլոնի երկրորդ գրքում կարդում ենք. «Բայց յորժամ լսես զայս, մի կարծիր ընկղմել միոյն ի միւսն. զանմարմին և զանճառելի էութիւն և ամենեւին արտաքոյ թանձրութեան և նիւթոյ, զի ընդ դիմաց և ընդ առանձնաւորութեան զանազանի երկրպագելի և ամենասուրբ Երրորդութիւն այլ ըստ նոյնութիւն բնութենէն ուսաք զՀայր յՈրդի գոլ և զՈրդի ի Հայր և վասն

---

[1] **Դաւիթ Անհաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 64:

[2] Մատենադարան, ձեռագիր № 2751, 142 ա:

[3] **Աս. Մնացականյան**, նշվ. աշխ, էջ 27:

[4] **Աս. Մնացականյնա**, նշվ. աշխ., էջ 28:

անվրէպ նմանութիւն և զի աստվածային և անպատմելի բնութիւնէն տեղի տանելոյ ոչ այլ ինչ է, բայց ինքն միայն: Զայլայլելի և զմահկանացու բնութիւն ընդ անմահին և անայլայլելւոյ յորովայնի ամենամաքուր կուսին խառնեալ յարմարի, ընդ բնութիւն օտարացեալսն՝ իւրով անճառելի իմաստութեամբն խառնեալ միացոյց վասն զի անհնարինքն առ ի մարդկանէ հնարաւորք էն ամենայն: Իսկ զոր նոյն և անպատելի բանի, մանաւանդ ընդ մարմնոյ տնօրինութենէն իրագործութիւն»[1]:

Միանշանակ համաձայնվել Աս. Մնացականյանի վերոնշյալ տեսակետի հետ չենք կարող, սակայն չենք սխալվի, եթե ասենք, որ Հովհաննես Սարկավագի պոեմում միջնադարին բնորոշ խորհրդանշաններն ու առհասարակ նշանները տարբեր մեկնաբանությունների և ընկալումների տեղիք են տալիս: Կարծում ենք՝ բանաստեղծը փորձում է ապացուցել, որ հայտնությունը մարդուն տրված աստվածային շնորհ չէ: Մարդը իր կրթության, տքնության, աշխատանքի միջոցով կարող է հասնել շնորհի, արդյունքի: Հրանտ Թամրազյանը հայտնության վերաբերյալ զուգահեռ է անցկացնում Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Սարկավագի հայացքների միջև և գտնում, որ վերջինս, Վերածննդի հանրագիտակ ներկայացուցիչ լինելով, կարևորում է հատկապես մարդկային մտքի անդուլ գործունեությունը, միտքն է կարևորում[2], մինչդեռ Դավթակ Քերթողը, Նարեկացին աներկբա հավատում էին, որ բանաստեղծություն գրելն աստվածային հայտնության և շնորհի արդյունք է, քրիստոնեական միջնադարում գիտությունը, գեղարվեստական գրականությունը և արվեստը դիտվում էին որպես աստվածային հայտնության դրսևորում[3]:

3. **Ազատության խորհուրդը:** Հովհաննես Սարկավագը պոեմում քննության է դնում մի կարևոր խնդիր ևս. ազա՞տ է սարյակը կամ բնության մեջ գտնվող թռչունը, բնությունը, թե՞ մարդու նման կապված է թևավոր ժամանակից ու դատաստանից: Կամ մարդը գիտակցո՞ւմ է, որ ուներ ընտրության, ազատ կամքի հնարավորություն:

---

[1] Մատենադարան, ձեռագիր № 2595, 10 ի:

[2] Տե՛ս **Հ. Թամրազյան**, նշվ. աշխ., էջ 511:

[3] **Վ. Եղիազարյան**, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Տե՛ս Հովհաննես Սարկավագ Իմաստասեր. Տաղեր և հոգևոր երգեր, էջ 15:

Թռչունը շեշտում է այն հանգամանքը, որ մարդուն տրված էր ազատություն, կամք, նա կարող էր ընտրություն կատարել և սխալի պատճառով դարձավ «սահմաններ դնող»: Եթե հայտնությունը՝ Քրիստոսն է, «նոր մարդու» խորհրդանիշը, ուրեմն **կրում է** նաև ազատությունը:

Մեզ զի՞ էք մեղադիր, որ չզրկեցաք զոք ի տեղւոյ,
Ոչ անցաք **զսահմանաւ**, զոր աւանդեաց մեզ Արարիչն: (էջ 59)

Բանաստեղծը մեղադրում է թռչնին, որ նա էլ, չցանկանալով բացավայրերը՝ անապատները, ազատությունը, նախընտրել է երկիրը, այս միջավայրը:

Երաժիշտք են և նոքա, բայց ցանկացան անապատի,
Դաշնականացն նուագօք **զբացավայրսն** զարդարեն:
(էջ 57) (ընդգծումները մերն են-Ա. Ս.)

Այսինքն՝ նախընտրում են ազատ վայրերը, այս կերպ նաև արտահայտում իրենց ազատ կամք ունենալու և այն ազատ դրսևորելու հանգամանքը:

Քրիստոսի ազատության մասին ուշագրավ մեկնաբանություն էր արվել դեռևս 5-րդ դարում, էական է տարբերությունը արդեն 12-րդ դարում, երբ Հովհաննես Սարկավագը կարևորում է նաև կամքի խնդիրը: 5-րդ դարում Ագաթանգեղոսը գրում է. «Վասն զի ինքն Տէրն ծառայական մարմնովն (ծառայական գրելով՝ պարզ է, որ նկատի ունի նաև ժամանակավոր-Ա. Ս.) զամենայն արդարութիւնսն կատարեաց, զի մարմնոյն, զոր խառնեաց և միացոյց յԱստուածութիւնն՝ նմին մարմնոյն տացէ զյաղթութիւնն: Զի որպէս ընդ միոյ ադամական մարմնոյն պարտավորեցան՝ նոյնպէս ընդ միոյ տէրունական մարմնոյն ազատեսցին ի ծառայութենէ մեղացն, այնու ազատութեամբն՝ որ ի վեր է քան զամենայն ազատութիւնս»[1]: 12-րդ դարում կամքի և ազատության խնդիրը բարձրացրած Հովհաննես Սարկավագը գրում է.

Ոչ միայն **մահուամբ**, այլ և սաստիկ գանարբութեամբ,
Ընդ ընկալողացդ զՏեառն կամըս չընկալողքս զգիտութիւն,
Ընդ ազատ կամաց ունողսդ հետեւեալքս ըստ բնութեան,
Ընդ մտաւորսդ և բանաւորս անբանութեամբ պարաւանդեալքս:
(էջ 59)

---

[1] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 298-299:

Սարյակը մեղադրում է մարդուն, որ ընտրության դեպքում Աստծուն չեն ընտրել, այլ՝ երկրային մեղքերը: Վ. Սաֆարյանը գրում է. «Ահա այս հակասությունը իր բանավիճային հիմքում նպատակ ունի ամբողջացնելու նաև հեղինակի-մարդու անհատականությունը, կարևորելու նրա անձնական ազատությունը[1]»: Ազատության երկու ընկալում կա պոեմում՝ անձնական ազատություն (թռչունը ուզո՞ւմ է ազատ անապատը, բացավայրը) և ազատություն բառը՝ լայն, փիլիսոփայական ընկալմամբ (մարդը ազատ է ընտրության հարցում): Ինչու՞ է սարյակը նախընտրում այս միջավայրը, մինչդեռ մյուս թռչունները անապատներում են և վայելում են իրենց ազատությունը: Սարյակը իր **կամքով** է **ընտրել**: Շեշտեցինք **կամք** և **ընտրություն** բառերը, քանի որ այս փիլիսոփայական հասկացությունները նման կերպ են ներկայացվում 20-րդ դարի սկզբում նախ էկզիստենցիալ փիլիսոփայության, ապա էկզիստենցիալ գրականության մեջ:

> **Իմ եւ մեր** է այս աշխարհ, յորում եւ դուք էք պանդխտեալ… (58), (ընդգծումը մերն է –Ա.Ս.)

Ի վերջո, թռչունն էլ մարդու նման ընտրության ազատ հնարավորություն է ունեցել, բայց ինչպես խոստովանում է բանաստեղծին, նրա նման չի կորցրել արդարությունն ու մեղք չի գործել.

> Ընդ ազատ կամաց ունողսդ հետեւեալքս համար ըստ բնութեան… (59):

Այսինքն՝ թռչնի համար կարևոր է ազատ կամքի խնդիրը: Թռչնի զայրույթը հատկապես պոեմի այս հատվածում է զգալի, ուստի ենթադրում ենք, թե որքան կարևոր է ազատության, կամքի խնդիրը Հովհաննես Սարկավագի համար: Մարդուն տրված է եղել ազատ կամք, իսկ թռչունները ընդամենը բնության հետևորդներն են, մարդուն տրված է բանականություն և խելք, իսկ նրանք կաշկանդված են անխոսությամբ:

Հովհաննես Սարկավագի պոեմը ապացուցում է նաև, որ հայ միջնադարյան գրականության մեջ փիլիսոփայությունն ու գրականությունը հանդես էին գալիս զուգահեռաբար: Կտրված չէին և փիլիսոփայական գաղափարները արտահայտվում էին գեղարվեստորեն: «Լուծմունք «Սահմանաց գրոց» մեկնության մեջ կարդում ենք. «Յորմէ և նոյն բնութենէ և ի նոյնն առ կայացեալ սեռս է ստեղծ կենդանեաց, զորս ի բազումս և յանթիւս բաժանեաց տեսակս և յանհատ գոյութիւնս. զոմանս յօդ

---

[1] **Վ. Սաֆարյան**, նշվ. աշխ., էջ 85:

պարող և զնոյն պերճ փութմամբ զարդարող և զայլս յերկիր ընթանալ ի վերայ երեսաց[1]»:

Այսպիսով, Հովհաննես Իմաստասերի «Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն, որ զաղօթանոցաւ նորա ճռուեղէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ» պոեմում կյանքի ու մահվան, հայտնության ու ազատության փիլիսոփայական հասկացությունները ներկայացված են խորհրդանշական, միջնադարի համար հարազատ նշանների միջոցով: Պոեմում հիմնական գաղափարը մարդկային մեղքի պատճառով մեծ հավերժի ձևերից մեկի՝ կյանքի ժամանակավոր դառնալու բողոքն է, ինչպես նաև հայտնության տարբեր ընկալումների պարզաբանումը: Ըստ մեզ՝ հայտնությունը պոեմում ունի ներկայիս աստվածաբանական դրույթների ապացուցմամբ հաստատված խորհուրդը՝ հայտնությունը Քրիստոսն է, իսկ Քրիստոսը «նոր մարդու» հավաքական կերպարն է: Պոեմում շեշտված են ազատ կամքի, ընտրության, ազատության խնդիրները: Հովհաննես Սարկավագը կտրված չէր իր ժամանակաշրջանից, ստեղծագործությունները զերծ չեն միջնադարյան կանոնիկ կրոնական հայացքներից, սակայն նա Վերածննդի հանրագիտակության գլխավոր ներկայացուցիչներից է՝ առաջադեմ և հումանիստական գաղափարներով, որոնք քննում է փիլիսոփայական վերլուծական շերտերով՝ արտահայտում գեղարվեստական վարպետությամբ:

Բանալի բառեր *- Հայտնություն, ազատություն, Հովհաննես Սարկավագ, Փիլոն Եբրայեցի, Դավիթ Անհաղթ, կամք, ընտրություն, փիլիսոփայական պոեմ:*

ЖИЗНЬ И СМЕРТЬ, ОТКРОВЕНИЕ И СВОБОДА, В ФИЛОСОФСКОМ СОВЕТЕ ОГАННЕСА САРКАВАГА В МЫСЛЕННО-ФИЛОСОФСКОЙ ПОЭМЕ "ДЕЛО МУДРОСТИ ПТЕНЦА, КОГО НАЗВАЛИ САРИК"

Анна Степанян

Ключевые слова: *Откровение, свобода, Оганнес Саркаваг, Филон Ебраеци, Давид Анахт, воля, выбор, философская поэма.*

---

[1] **Հովհաննէս Սարկաւագ Իմաստասէր**, Լուծմունք «Սահմանաց գրոց», էջ 11:

В статье Оганеса Саркавага, в мысленно-философской поэме «Дело мудрости птенца, кого назвали сарик» рассматриваются тайны форм великой вечности- жизни и смерти, откровения и свободы, воли на основе современных богословских и философских теорий. Дискуссия поэта и символа природы сарьяка является художественным способом, посредством которого Оганес Саркаваг представляет свои религиозные, философские размышления и доказывает их посредством опыта, присущего мыслителю энциклопедии Возрождения. В поэме подчеркиваются проблемы свободной воли, выбора, божественного дара-благодати. Были особо подчеркнуты те философские и теологические положения, которые Оганес Саркаваг представил в толкованиях, посвященных трудам Давида Анахта, Филона Ебраеци. Поэма мысленно-философская, которая насыщенна интересными художественными решениями.

THE PHILOSOPHICAL SIGNIFICATION OF LIFE AND DEATH, REVELATION AND LIBERTY IN THE PHILOSOPHICAL POEM "A WORD OF WISDOM TO THE STARLING" BY HOVHANNES SARKAVAG

Anna Stepanian

Key Words: *Revelation, liberty, Hovhannes Sarkavag, Pylon Yebrayetsi, Davit Anhaght, will, choice, philosophical poem.*

The present article is aimed at the investigation of the concepts presented in the philosophical poem "A Word of Wisdom to the Starling" by Hovhannes Sarkavag, namely those of life and death, revelation, liberty and will based on the modern theological and philosophical theories. Hovhannes Sarkavag represents his religious and philosophical reflections through the debate between the poet and the starling which is the symbol of the nature and he proves his considerations due to the experience typical for the wise thinker of the Renaissance period. The problems of free will, choice and the divine gift are stressed in the poem. Emphasized are those philosophical and theological doctrines that Hovhannes Sarkavag presented in the interpretations of the works of Davit Anhaght and Pylon Yebrayetsi. The poem is of philosophical nature with interesting artistic solutions.